ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆԻ, «ՀԱՅՐԵՆԻՔ -ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 21-ՐԴ ԴԱՐԱՍԿԶԲԻՆ» (2001-2017), Երևան, ԵՊՀ, հրատ., 2018, 446 էջ:

Աշխատությունը միանգամայն նոր խոսք է Սփյուռքագիտության մեջ՝ իր առաջադրած հիմնախնդիրների և դրանց լուծումների լրջությամբ և արդիականությամբ:

Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների ուսումնասիրության նշված շրջափուլն ընդգրկում է 21-րդ դարասկիզբը, որը լրացնում է Հայաստանի երրորդ հանրապետության վերոնշյալ հիմնահարցի ամբողջական պատմությունը:

Պրոֆեսոր է. Մինասյանին հաջողվել է համապատասխան արխիվային նյութերի, այդ թվում ՀՀ արտգործնախարարության ընթացիկ արխիվային փաստաթղթերի, սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող նյութերի ժողովածուների, տպագիր սկզբնաղբյուրների, ՀՀ Սփյուռքի նախարարության պաշտոնական տեղեկագրի, տարեգրքերի, հաշվետվությունների, հրապարակի վրա եղած հայ և օտարալեզու գրականության քննական ուսումնասիրության և վերլուծության արդյունքում համգամանորեն ներկայացնել և լուսաբանել Հայաստանի հանրապետության և Սփյուռքի միջև 2001-2017 թթ. հաստատված գործուն հարաբերությունները:

«Լինելով շնորհաշատ ու աշխատասեր՝ սփյուռքահայությունն իր նպատակասլաց գործունեության ու վաստակի շնորհիվ դարձավ հյուրընկալ երկրների անբաժանելի մասնիկը,– գրում է հեղինակը» /էջ 11/: Նա թվական տվյալներով ցույց է տալիս, որ 21-րդ դարասկզբին Հայաստանից դուրս ապրող հայերի թիվը, ըստ աշխարհամասերի ու տարածաշրջանների, կազմում է 7 մլն. 202 552 /առանց իսլամացված ու ծպտյալ հայերի թվաքանակի/: Հայերը բնակվում են աշխարհի 117 երկրներում /էջ 11/: Նշելով հայության աշխարով մեկ տարածվածության մասին՝ է. Մինասյանը ընդգծում է, որ «հայության մեծ մասը գտնվում է ԱՊՀ երկրներում /շուրջ 3 մլն/, Հյուսիսային և Կենտրոնական Ամերիկայում / շուրջ 1,7 մլն/, Եվրոպայում /շուրջ 1,7 մլն/: Զգալի թվով հայեր կան նաև Հարավային Ամերիկայում /շուրջ 4600 հազար/: Ամենամեծ համայնքների թվին են պատկանում Ռուսաստանի Դաշնության /2 մլն 600 հազար/, ԱՄՆ-ի 1 մլն 600 հազար, Ֆրանսիայի / 700 հազար/, Ուկրաինայի / 500 հազար/, Վրաստանի 250 հազար/, Արգենտինայի /128 հազար/ Իրանի /120 հազար/, Բրազիլիայի / 100 հազար/, Լիբանանի /140 հազար/, Կանադայի /90 հազար/, Ավստրալիայի / 85 հազար/ հայ համայնքները» /էջ 12/: Խոսելով 21-րդ դարասկզբին Հայկական սփյուռքում տեղի ունեցած կառուցվածքային փոփոխությունների մասին՝ հեղինակը նշում է, որ այլևս գոյություն չունի Ադրբեջանի հայկական խոշոր համայնքը, որտեղ մինչև 1990 թ. ապրում էր շուրջ կես միլիոն հայ, մեծ քանակությամբ նվազել է Միջին Արևելքի երկրներում, հատկապես Սիրիայում ապրող հայության թվաքանակը: Նա հայության թվաքանակի անկումը բացատրում է արցախյան ազատագրական շարժումով պայմանավորված Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում և այլ շրջաններում կազմակերպված հայերի ցեղասպանությամբ, հայության բռնագաղթով, ինչպես նաև Սիրիայում սկսված պատերազմով /էջ 12/: «21-րդ դարասկզբին մերձավորարևելյան ճգնաժամի, մասնավորապես Իրանա-իրաքյան, Իրաքա-քուվեյթյան, Սիրիական և այլ պատերազմների հետևանքով տարածաշրջանի ստվարածավալ հայկական համայնքները զգալիորեն նոսրացան ... ինչի

հետևանքով հայության մեծ մասը արտագաղթեց այլ երկրներ»,- գրում է հեղինակը /էջ12/»:

Այստեղ հեղինակը առանձնացնում և գովեստով է խոսում «Հայաստան» համահայկական հիմնադրամի ՀՀ և Արցախի սոցիալ-տնտեսական բազում խնդիրների լուծման գործում կայացած մեծածավալ աշխատանքների մասին: Նա մեծապես կարևորում է նաև «Լինսի», «Հ. Կարագյոզյան» մանկական, «Ջիևիշյան» հիշատակի, «Իզմիրյանե», «Գաֆեսճյաև ընտանիք», «Թուֆենկյան», «Ազնավուրը Հայաստանին», «Բողոսյան», «Հովնանյան», «Հայաստանի մանուկներ», «Փյունիկ» և այլ հիմնադրամների կատարած ներդրումները ՀՀ և Արցախի անկախության ամրապնդման և սոցիալ-տնտեսական առաջընթացի գործում /էջ 255-279/: Է. Մինասյանը հանգամանորեն է անդրադառնում ՀԲԸՄ /Հայկական բարեգործական ընդհանուր միություն/ Հայաստանում և Արցախում իրականացրած կրթամշակութային և այլ ոլորտների բազում մեծածավալ ծրագրերի իրականացմանը, քննարկում է ՀՕՄ-ի /Հայ օգնության միություն/, ՀՕՖ-ի / Հայ օգնության ֆոնդ/–ի իրականացրած ծրագրերի կարևորությունը ՀՀ-ի, Արցախի զարգացման գործում, բացահայտում է անհատ բարերարների / է. էռնիկյան, Ս. Կարապետյանի, Վ. Մանուկյանի, Ռ. Վարդանյանի, Ս. Սիմոնյաևի, Վ. Սերմաքեշի/ ՀՀ-ում և Արցախում կատարած ներդրումների դերն ու նշանակությունը հայկական երկու անկախ պետականությունների կայացման, զարգացման ու ամրապնդման գործում /էջ 288-299/:

Հեղինակը Հայաստան-Սփյուռք գործակցության քաղաքականությունը հիմնում է հետևյալ արդյունավետ մոտեցումների վրա: Առաջին՝ գործընկերային հարաբերությունների կառուցում և զարգացում, երկրորդ՝ փոխադարձ վստահության և փոխըմբռնման ամրապնդման աշխատանքների կատարում, երրորդ՝ հարցերի քննարկումների և լուծումների համատեղ որոնում, ինչն իրականացվում է երկխոսության, փոխադարձ հարգանքի, փոխզիջումների և փոխհամաձայնության ճանապարհով, չորրորդ՝ Սփյուռքի նախարարության ծրագրերի իրականացում պետական բյուջեի միջոցների հաշվին /էջ 43/: Է. Մինասյանը Հայրենիք - Սփյուռք կապերի ամրապնդման բնագավառում նախարարության խնդիրները բաժանում է մի քանի հիմնական կարևոր ոլորտների և դրանցից առանձնացնում է.

1. Հայապահպանության խնդիրները, որոնց թվին է դասվում ուծացումը կանխելու համատեղ ծրագրերի իրականացումը: Դրանից էր համարվում ազգային ինքնության արմատավորումը այլալեզու և այլադավան հայերի շրջանում, երիտասարդության հայեցի դաստիարակությունը, սփյուռքահայ երիտասարդության հանգստի կազմակերպումը մայր հայրենիքում «Իմ Հայաստան» համահայկակաև փառատոնի, համահայական խաղերի, ,Արի տուն, «Բազե» և այլ ծրագրերի շրջանակներում, հայապահպանության նպատակով կազմակերպվող սփյուռքահայ ուսուցիչների, կրթական ու համայնքային գործիչների ամենամյա ամառային դպրոցների կազմակերպումը և այլն (էջ 44,45):

2. Առանցքային է համարում Սփյուռքի հայ ներուժի համախմբման և ՀՀ զարգացան համար դրա օգտագործման խնդիրները, այդ թվում Հայրենիք-Սփյուռք գործակցության մասնագիտական կազմակերպչական կառուցվածքային հենքի ձևավորումը, ՀՀ-ի և Սփյուռքի քաղաքական, տնտեսական, գիտակրթական, հոգևոր– մշակութային կարողությունների և ուժերի համախմբումը, աջակցությունը մասնագիտական հանձնախմբերի ստեղծմանը, ՀՀ Սփյուռքի նախարարության կողմից կազմակերպած համահայկական մասնագիտական համաժողովները ճարտարապետների, լրագրողների, բժիշկների, իրավաբանների, գրողների և այլն:

3. Կարևորվում են հայրենադարձության հետ առնչվող խնդիրները, այդ թվում՝ համապատասխան ծրագրերի մշակումը և դեպի հայրենիք սփյուռքահայ երիտասարդության ուխտագնացության կազմակերպումը հայոց պետականության ամրապնդման,

ժողովրդագրության բարելավման և համազգային խնդիրների լուծման գործում սփյուռքահայերի մասնակցությունը ապահովելու համար բարենպաստ պայմանների ստեղծումը (49,50):

Աշխատության մեջ քննարկվել են 21-րդ դարասկզբին Հայրենիք-Սփյուռք հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, ինչպես նաև մշակութային առնչությունները, ներկայացվել է Հայկական Սփյուռքի ընդհանուր բնութագիրը՝ պայմանավորված աշխարհաքաղաքական փոփոխություններով: Միաժամանակ Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները արտացոլվել են Սփյուռքի առանձին կազմակերպությունների ու միությունների ձևաչափով, բացահայտվել են այդ առնչություններում Սփյուռքի տարատեսակ ու բազմաբնույթ գործոնի առանձնահատկությունները, վերհանվել են նրա ծավալած ակտիվ գործունեության հիմնական ուղղություններն ու նշանակությունը: Բազմաթիվ փաստաթղթերի ու նյութերի վերլուծությամբ ցույց է տրվել քաղաքական կազմակերպությունների, այդ թվում հայ ավանդական քաղաքական կուսակցությունների և համասփյուռքյան վերոնշյալ հարաբերությունների բարձր մակարդակի զարգացման գործում: Նա առանձնացնում է ՀՀ Սփյուռքի նախարարության առջև ծառացած հիմնական խնդիրներից համազգային ներուժի համախմբումը համահայկական խնդիրների լուծման գործում, հայրենադարձությունը խթանող կառուցակարգերի մշակումն ու ներուժը, ինչպես նաև հայրենադարձությամբ, սփյուռքահայության դաստիարակության ուղղությամբ ձեռնարկված միջոցների և նոր ծրագրերի մշակումն ու իրագործումը: Վերլուծելով Սփյուռքի մասնակցությունը ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման գործում՝ Մինասյանը միանգամայն ճիշտ է նկատում, որ այն դարձել է ավելի կազմակերպված ու նպատակային: Որպես ապացույց՝ հեղինակը նշում է Սփյուռքի դերակատարությունը հայրենիքում այնպիսի որոշումների զարգացման գործում, ինչպիսիք են՝ զբոսաշրջությունը, գյուղատնտեսությունը, տեղեկատվական տեխնոլոգիաները և ծառայությունները:

Այսպիսով՝ աշխատությունը գրված է հղկված ու արտահայտիչ հայերենով և համապատասխանում է հետազոտվող թեմային, դրա կատարման գիտագործնական բնույթին և լուրջ ներդրում է սփյուռքագիտության մասնավորապես հայ սփյուռքագիտության ոլորտում: Գրախոսվող աշխատությունն օգտակար կարող է լինել սփյուռքագետների, պատմաբանների, ուսանողների, ինչպես նաև ընթերցասեր հանրության համար:

Պատմագիտության թեկնածու, դոցենտ
Արարատ Վարդանյան